Հավելված N 481
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Ձեռներեցության վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքականության և ծրագրերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 23-32.19-Մ4-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության՝ այդ թվում նաև **փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ)** զարգացման պետական քաղաքականության մշակման և տնտեսության գերակայություններին համապատասխանեցման աշխատանքներին,

2) մասնակցում է ՓՄՁ-երի աճի ներառականությունն ապահովելուն ուղղված աջակցության գործիքակազմի մշակման և ձեռներեցության աջակցության՝ պետական աջակցության ծրագրերի մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքներին,

3) մասնակցում է կանանց և երիտասարդների գործարար ներուժի զարգացմանն ու խթանմանը միտված թիրախային աջակցության ծրագրերի մշակման և ներդրման աշխատանքներին.

4) մասնակցում է սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմի ընդլայմանն ուղղությամբ շարունակական աշխատանքներին.

5) մասնակցում է ճգնաժամանային և հետճգնաժամային իրավիճակներում ձեռներեցության դիմակայունության բարձրացմանն ուղղված աջակցության գործուն մեխանիզմների մշակման և մշտադիտարկման աշխատանքներին,

6) մասնակցում է տեղական ընկերությունների ճանաչելիության բարձրացման և արտաքին շուկաներում շահավետ դիրքավորման, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին.

7) մասնակցում է տեղական ընկերությունների բիզնես կառավարման, բրենդինգի, հանրային կապերի և միջազգայնացման, ֆինանսական պլանավորման, կորպորատիվ կառավարման սկզբունքների նորմուծման, առավել բարձր հավելյալ արժեքի ստեղծման և այլ գործընթացներում ձեռներեցության սուբյեկտների կարողությունների զարգացմանը ուղղված առաջարկների ձևավորման և ներկայացման աշխատանքներին:

Իրավունքները

- օգտվել համապատասխան մարմիններից ստացված անհրաժեշտ հիմնավորումներից և փաստաթղթերից Հայաստանի Հանրապետությունում Ձեռներեցության՝ այդ թվում նաև ՓՄՁ պետական քաղաքականության մշակման համար,
- օգտվել շահագրգիռ մարմիններից ստացված մասնագիտական կարծիքներից և առաջարկություններից ծրագրերի, ռազմավարությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական ուղեցույցերի մշակման աշխատանքների վերաբերյալ,
- պահանջել համապատասխան մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն ձեռներեցության զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղությամբ,
- պահանջել համապատասխան մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն ձեռներեցության զարգացման համար միջավայրի բարելավման տեսանկյունից՝ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանման և քաղաքականության մշակման համար.
- միջազգային վարկային ծրագրերի մշակման նպատակով ստանալ համապատասխան մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն.
- ստանալ համապատասխան մարմիններից ամբողջական տեղեկատվություն և նյութեր հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքներն իրականացնելու համար,
- մասնակցել պետական և միջազգային կառույցների հետ համագործակցությանն ուղղված նախարարության տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների կողմից առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներին:

Պարտականությունները՝

- հավաքագրել և վերլուծել ձեռներեցության զարգացման պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը,
- կազմել ձեռներեցության զարգացման պետական աջակցության ծրագրերի հաշվետվություններ՝ դրանց մշտական մոնիթորինգի արդյունքների հիման վրա,
- մշտադիտարկել օտարերկրյա և միջազգային, ինչպես նաև մասնավոր կազմակերպությունների կողմից իրականացվող ձեռներեցության աջակցման ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական բազայի (ռեեստրի) աշխատանքների ընթացքը և արդյունքների վերաբերյալ կազմել և ներկայացնել տեղեկատվություն.
- ուսումնասիրել ձեռներեցության աջակցության վարկային, լիզինգային և փոխհատուցման պետական աջակցության ծրագրերը, ամփոփել արդյունքները, մշտադիտարկել դրանց իրագործման ընթացքը,
- ուսումնասիրել և տեղեկատվություն տրամադրել կանանց և երիտասարդների ստեղծարար ու գործարար ներուժի զարգացմանն ու խթանմանը միտված միջազգային թիրախային աջակցության գործիքակազմի և ձևաչափի վերաբերյալ,
- հավաքագրել տեղեկատվություն և առաջարկություններ ձեռներեցության ոլորտում նորարարական գաղափարների, տեխնոլոգիաների ներդրման և գեներացման խրախուսման վերաբերյալ, ամփոփել և կազմել տեղեկանքներ.
- հավաքագրել տեղեկատվություն մարզերում սկսնակ նորարար ձեռներեցների համար ֆինանսների, ձեռնարկատիրական հմտությունների և կապերի, ինչպես նաև գիտելիքի հասանելիության բարձրացման նպատակով իրականացվող պետական աջակցության ծրագրերի մասնակիցների վերաբերյալ և ստեղծել տվյալների բազա՝ սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմի շարունակականությունն ապահովելու նպատակով.
- ուսումնասիրել ճգնաժամանային և հետճգնաժամային իրավիճակներում ձեռներեցության դիմակայունության բարձրացմանն ուղղված միջազգային փորձը՝ կազմել համապատասխան տեղեկատվություն և առաջարկություններ.
- ներկայացնել առաջարկություններ թիրախային խմբերի, այդ թվում պատերազմի հետևանքով հաշմանդամ դարձած քաղաքացիների համար կայուն եկամուտ ունենալու նպատակով ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ,
- հավաքագրել և ամփոփել շահագրգիռ գերատեսչություններից և ասոցիացիաներից ստացված համապատասխան տեղեկատվությունը և առաջարկությունները տեղական ընկերությունների ճանաչելիության բարձրացման և արտաքին շուկաներում շահավետ դիրքավորման վերաբերյալ և կազմել համապատասխան տեղեկանքներ.
- ուսումնասիրել և վերլուծել միջազգային փորձը՝ ՓՄՁ-երի շրջանում արտահանման կարողությունների խթանման վերաբերյալ,

- հավաքագրել ոլորտային ասոցիացիաների կողմից Հայաստանի ՓՄՁ-երի ճանաչելիության բարձրացման և արտաքին շուկաներում շահավետ դիրքավորման վերաբերյալ ներկայացված առաջարկությունները, ամփոփել և կազմել տեղեկանքներ,
- հավաքագրել ոլորտային ասոցիացիաների և շահագրգիռ գերատեսչությունների կողմից ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանն ուղղված առկա ծրագրերի բարելավման վերաբերյալ առաջարկությունները, ամփոփել և կազմել տեղեկանքներ,
- պարբերաբար թարմացնել ձեռնարկատիրության ոլորտում որակյալ կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանն ուղղված ծրագրերի տվյալների բազան և մշտադիտարկել արդյունքները.
- հավաքագրել վերազգային ընկերությունների՝ Հայաստան ներգրացման, ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման, հայկական ընկերությունների գլոբալացման խթանման, ոլորտի նորաստեղծ ընկերությունների զարգացման ծրագրերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները,ամփոփել և կազմել տեղեկանքներ.
- ամփոփել տեղական ընկերությունների բիզնես կառավարման, բրենդինգի, հանրային կապերի և միջազգայնացման վերաբերյալ՝ շահագրգիռ գերատեսչություններից և ասոցիացիաներից ստացված տեղեկատվությունը և առաջարկությունները, ձեռներեցների համար կազմել ուղեցույցներ,
- մշակել ֆինանսական պլանավորման, կորպորատիվ կառավարման սկզբունքների ներմուծման, առավել բարձր հավելյալ արժեքի ստեղծման և այլ գործընթացներում ձեռներեցության սուբյեկտների կարողությունների զարգացմանը ուղղված և շահագրգիր գերատեսչություններից ստացված առաջարկություններն ընդգրկող տեղեկանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: